

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀԲԸՄ Նախագահը Քննարկած են Սուրիահայերու Խնդիրները



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 30 Ապրիլին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) նախագահ տիար Պերճ Սեդրակեանը: Հանդիպման Վեհափառ Հայրապետը եւ ՀԲԸՄի նախագահը գոհունակութեամբ անդրադարձած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ արդիւնաշատ ամագործակցութեան եւ քննարկելով համատեղ իրականացուող կրթական եւ ընկերային ծրագիրներու ընթացքը, նախանշած են ապագայ ընելիքները: Նորին Սրբութիւնը եւ տիար Պերճ Սեդրակեանը մասնաւորապէս կարեւորած են երիտասարդներու հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեան, ինչպէս նաեւ հոգեւորականներու նոր սերունդի, կրթութեան ուղղուած ծրագիրները: ՀԲԸՄ նախագահը Վեհափառ Հայրապետին ներկայացուցած է միութեան կողմէ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ու Սփիւռքի տարբեր

համայնքներու մէջ կատարուող աշխատանքները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս կապակցութեամբ իր գնահատանքը փոխանցած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, անոր ազգօգուտ եւ հայրենանուէր գործունէութեան եւ Հայոց Եկեղեցւոյ առաքելութեան ցուցաբերուող զօրակցութեան համար:

Զրոյցի ընթացքին խոր մտահոգութիւն յայտնուած է Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ տիրող իրավիճակի հետեւանքով հայկական համայնքներու արտագաղթի առնչութեամբ, յատկապէս խօսուած է Սուրիոյ հայ համայնքին եւ Հայաստանի մէջ հաստատուած սուրիահայ ընտանիքներուն Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի կողմէ ցուցաբերուող օժանդակութեան եւ այս ուղղութեամբ ծրագրուող յետագայ քայլերու մասին: Այս կապակցութեամբ ընդգծուած է, որ սուրիահայութեան ցոյց տրուող զօրակցութիւնը շարունակական պիտի ըլլայ, նաեւ կարեւորուած է պետական, հասարակական եւ ազգային բարեսիրական բոլոր կառոյցներու ուժերու մէկտեղումն ու համակարգուած աշխատանքը: Գարեգին Բ Հայրապետ եւ տիար Պերճ Սեդրակեան անդրադարձած են ազգային-եկեղեցական կեանքին եւ հայապահպանութեան առնչուող նաեւ այլ հարցերու:

Հանդիպման ւարտին Պերճ Սեդրակեան Մայր Տաճարին մէջ նաեւ ներկայ գտնուած է Սուրբ եւ Անմահ պատարագին: